ՀՏԴ : 947.925

ՍԱՐԳԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ. Խանասորի Վարդանի հիշատակարանը, *Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2022, 259 էջ*:*

**Բանալի բառեր՝ Խանասորի Վարդան, հայ-թաթարական կռիվներ, ինքնապաշտպանական մարտեր, կամավորական շարժում, Հայ Հեղափոխական դաշնակցություն, Թուրքիա, Ռուսաստան:**

*Հայ ազգային-ազատագրական շարժման նվիրյալների կյանքի և գործունեության ուսումնասիրությունը մեր պատմագրության կարևոր ուղղություններից է: Այս համատեքստում կարևոր տեղ են զբաղեցնում առանձին գործիչների հուշերը, որոնք լույս են սփռում ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների վրա և դրանով ստանում աղբյուրագիտական արժեքի նշանակություն: XIX դարավերջի և XX դարասկզբի հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների հուշագրությունները հրատարակության նախապատրաստելու գործում զգալի աշխատանք է կատարել պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ Ռուբեն Սահակյանը: Նրա ջանքերով և աշխատասիրությամբ հրատարակվել են Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի (Ա-դո) (Երևան, 2015 թ.) և Միքայել Տեր-Մարտիրոսյանի (Մար) (Երևան, 2022 թ.) հուշերը: Խանասորի Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) հուշերի հրատարակությունն այս շարքի հերթական աշխատանքն է: Ռ. Սահակյանը նշում է, որ Խանասորի Վարդանի հուշերի առաջին մասը (1894–1896 թթ.) Սիմոն Վրացյանը տպագրել է «Հայրենիք» ամսագրում, իսկ խորհրդային տարիներին Վարդանը սկսել է շարադրել իր հուշերը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի հանձնարարությամբ (էջ 26):*

*Խանասորի Վարդանի կյանքն ու գործունեությունը Ռ. Սահակյանը ներկայացրել է ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների համատեքստում՝ զուգադրելով ինչպես այդ շրջանի ՀՅԴ գործիչների և տեսաբանների՝ Ակնունի, Ռոստոմ, Վարանդյան, ֆիդայական շարժման հայտնի դեմքերի (Սևքարեցի Սաքո, Նիկոլ Դուման և այլն), այնպես էլ ժամանակակից պատմաբանների (Հ. Գևորգյան) Խանասորի Վարդանի գործունեության վերաբերյալ արտահայտած տեսակետները:*

*Հուշագրությունն ունի աղբյուրագիտական արժեք: Գրքի արժանիքներից մեկն այն է, որ Ռ. Սահակյանն ինչպես Ս. Մեհրաբյանի կյանքին և գործու-*

* *Ներկայացվել է 06. III. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

*նեությանը վերաբերող գլխում, այնպես էլ բուն հուշագրության տողատակերում բազմաթիվ ու բազմաբնույթ ծանոթագրություններ է տվել, որոնք հարստացրել են կատարված աշխատանքը և խորացրել նրա գիտական կողմը:*

*«Սարգիս Մեհրաբյանի կյանքը և գործունեությունը» գլխում Ռ. Սահակյանը համառոտ ներկայացնում է նրա գործունեության առաջին շրջանը, հայ ազգային-ազատագրական շարժման ապագա գործչի աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ազդեցություն թողած գործոնները, այնուհետև՝ նրա պրակտիկ գործունեությունը՝ մասնակցությունը Խանասորի արշավանքին, հայդուկային գործունեության շրջանը Վան-Վասպուրականում: Խոսվում է Պարսկաստանում 1890-ական թվականներին նրա գործունեության, ՀՅԴ-ին անդամագրվելու և «Վարդան» կուսակցական անունը ստանալու մասին: Այս գլխում Սահակյանն ընդգծել է այն կարևոր հանգամանքը, որ, մասնավորապես, Արցախում հայ-թաթարական կռիվների հրահրման հարցում իր «սև» գործն է կատարել հետադիմական մամուլը: Բերվում է Բաքվի* «Каспий» *թերթի օրինակը, որի էջերում կեղծ ու սադրիչ տեղեկություններ են տպագրվել և թաթարներին հայերի դեմ հրահրել (էջ 38): Բացի այդ, Օսմանյան Թուրքիայի կառավարությունն էլ զինական աջակցություն է ցույց տվել կովկասյան ցեղակիցներին (էջ 49):*

*Սահակյանն արժևորել է 1905–1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ Արցախի թատերաբեմում հայերի ինքնապաշտպանության կազմակերպման գործում Վարդանի դերակատարությունը: Հիմնվելով նաև Վարդանի փաստերի վրա՝ նա ընդգծել է այն հանգամանքը, որ Նախիջևանի շրջանի հայ-թաթարական բախումներն ունեցել են ոչ միայն ազգային, այլև տնտեսական ենթատեքստ, այսինքն՝ թաթար բուրժուազիան ցանկացել է ազատվել իր համար անցանկալի հայ մրցակիցներից:*

*Գլխում ցույց է տրվում, որ ցարական իշխանությունների կողմից, այսպես կոչված, «Դաշնակցության գործի» հրապարակ հանելուց հետո Վարդանը ստիպված է լինում Արցախից հեռանալ Բաքու, իսկ հետո մեկնում է Վիեննա՝ մասնակցելու ՀՅԴ IV ընդհանուր ժողովին: Այստեղ նա ներկայացրել է ազատագրական հետագա պայքարի մարտավարության հարցերի վերաբերյալ իր տեսակետները: Սահակյանը նկատում է այն հանգամանքը, ըստ որի, կյանքի իր փորձառությունից ելնելով՝ Վիեննայում Վարդանը հակադրվել է ցարիզմի դեմ հայ-թաթարական համագործակցության և համատեղ հեղափոխական պայքարի վերաբերյալ ՀՅԴ որոշ գործիչների (Օհանջանյան, Ահարոնյան) առաջ քաշած տեսակետներին:*

*Իր հուշերում Վարդանը քննադատել է արմենականներին՝ նրանց որդեգրած պայքարի լուսավորական մարտավարության համար, չի գնահատել նրանց ներդրումը՝ ընդգծելով միայն դաշնակցության դերը: Ռ. Սահակյանը ցուցաբերել է անաչառ, վերկուսակցական մոտեցում և ցույց տվել, որ արմենականները, մասնավորապես, Արևմտյան Հայաստան զենքի տեղափոխման հարցում մեծ աշխատանք են կատարել:*

*Գրքի այս բաժնում Ռ. Սահակյանը, հիմնվելով նաև Վարդանի վկայությունների վրա, տեսականորեն հիմնավորել է այն հանգամանքը, թե ինչո՞ւ ՀՅԴ-ն չկարողացավ այնպիսի կուռ կառույց ստեղծել Կիլիկիայում, ինչպիսին ուներ Վասպուրականում:*

*1917 թ. փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխություններից հետո Անդրկովկասում ստեղծված տագնապալի իրավիճակում Վարդանը զբաղեցրել է Բաքվի հայոց ազգային խորհրդի զինվորական կոմիսարի պաշտոնը: Սահակյանը գրում է, որ Վարդանն Աստրախանի Արտակարգ հանձնաժողովից հանձնարարություն է ստացել՝ պարզելու Բաքվից ծովային ճանապարհով տարհանված 26 կոմիսարների գտնվելու վայրը և հնարավորության դեպքում փորձել նրանց ազատել գերությունից. սակայն Վարդանին դա չի հաջողվել (էջ 57):*

*1918 թ. հետո՝ մինչև Վարդանի մահը (1943 թ., Մոսկվա), նրա կյանքի ու գործունեության մասին որևէ տեղեկություն չի տրված, թերևս միայն այն, որ կնոջ մահից հետո զբաղվել է հողագործությամբ (էջ 58):*

*... Սարգիս Մեհրաբյանն իր հուշերը շարադրել է 1936–1939 թթ. Երևանում և Մոկվայում: Դրանք գրվել են 12 տետրում, որոնցից Ռ. Սահակյանը հրատարակության է պատրաստել նշանավոր գործչի 1906–1916 թթ. գործունեության շրջանն ընդգրկող 10-րդ, 11-րդ և 12-րդ տետրերը: Հիշատակարանը բաղկացած է 5 ենթագլխից, որոնք կրում են հետևյալ վերնագրերը. ա. «Արցախի ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար», բ. «Մասնակցությունը ՀՅԴ IV ընդհանուր ժողովին և հետագա գործունեությունը», գ. «Կամավորական շարժում», դ. «Դեպի Վան», ե. «Կամավորական խմբերի լուծարումը»:*

*Առաջին ենթագլխում Վարդանն առաջ է մղում այն միտքը, որ 1905–1906 թթ. Անդրկովկասի հայ-թաթարական կռիվները կազմակերպվել էին ռուսական իշխանությունների կողմից: Նա հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Արցախում և Սյունքիում ծավալված այդ կռիվներից, որոնք ընթերցողին հնարավորություն են տալիս ավելի խորն ու առարկայական պատկերացում կազմել ողբերգական այդ իրադարձությունների մասին: Վարդանը հիշատակում է այն բոլոր գործիչների անունները՝ մեծամասամբ ՀՅԴ-ից, որոնք դերակատարություն են ունեցել հայ-թաթարական կռիվների ժամանակ: Դրա հետ մեկտեղ նա նշում է նաև, որ, օրինակ, հնչակյաններ կային Խնձորեսկում, ուր միշտ կռիվներ էին լինում (էջ 71): Վարդանը, հավանաբար, տուրք տալով կուսակցական մտայնությանը, չի գրում դրանք միջկուսակցական բնույթ էին կրում, իսկ Ռ. Սահակյանն իր ծանոթագրության մեջ նշում է, որ դժբախտաբար հնչակյանների ու դաշնակցականների միջև եղել են միջկուսակցական կռիվներ (էջ 71): Վարդանն առանձին մանրամասնությամբ է նկարագրել Շուշիում և շրջակայքում տեղի ունեցած հայ-թաթարական կռիվները, տեղի ռուսական իշխանությունների դիրքորոշումը:*

*Խոսելով ՀՅԴ IV ընդհանուր ժողովին մասնակցելու նպատակով Վիեննա կատարած իր ճամփորդության մասին՝ Վարդանը նկարագրում է լեհական, մակեդոնական և այլ հեղափոխական կազմակերպությունների (օրինակ՝ էսէռների) հետ Դաշնակցության համագործակցությունը: Հետաքրքիր մանրամասներ է տալիս Ավստրիայի, Շվեյցարիայի տեղական կյանքի ու կենցաղի, իր ամուսնության, անձնական կյանքի, քայքայված առողջությունը վերականգնելու համար ձեռնարկված քայլերի, 1911–1912 թթ. Կ. Պոլսից՝ Էրզրում, իսկ հետո նաև Արևմտյան Հայաստանի այլ վայրեր կատարած իր ճամփորդության մասին: Խոսում է երիտթուրքական հեղաշրջումից հետո Թուրքիայում ստեղծված իրադրության և իր ստացած տպավորությունների մասին:*

*Ընդգծենք ուշագրավ մի հանգամանք. Վարդանը 1909 թ. կիլիկիահայության կոտորածի, իսկ հետո նաև 1914 թ. Կովկասում ծավալված կամավորական շարժման մեջ մեղադրում է հայությանը և չարիք է համարում թուրքերի հետ կողք կողքի խաղաղ ապրելու վերաբերյալ արևմտահայերի անվստահությունը, ընդգծում վերջիններիս ռուսասիրությունը: Վարդանը դատապարտում է Ռուսաստանին, որ «միշտ Հայաստան է ցանկացել առանց հայի» (էջ 131), և մեկ այլ «սրիկա պետության էլ, որի նավերը չէին կարող բարձրանալ Սասնո լեռները (իմա՝ Մեծ Բրիտանիա – Հ. Գ.)» (էջ 132):*

*Վարդանի այս տեսակետի կապակցությամբ Ռ. Սահակյանը վկայակոչում է ազատագրական շարժման մեկ այլ գործչի՝ Միքայել Տեր-Հովհաննիսյանի (Մար) հուշերը, ըստ որի՝ վերջինս մտավախություն էր հայտնել առ այն, որ երիտթուրքական հեղաշրջումից հետո հայերի ու թուրքերի իրավահավասարությունը չհանդուրժող թուրք հետադեմ տարրերի դժգոհությունը կարող էր հակահայկական բռնկման վերածվել (էջ 131): Հետագա իրադարձությունները ցույց տվեցին Մարի մտավախության օբյեկտիվ լինելը:*

*Առաջին աշխարհամարտի լուրը Վարդանը ստանում է Բաքվում, որտեղից մեկնում է Թիֆլիս, ուր արդեն եռուզեռի մեջ էր կամավորական շարժումը: Նա գրում է, որ կամավորական առանձին ջոկատ կազմակերպելու առաջարկով Դաշնակցությունն իրեն դիմել է, բայց ինքը մերժել է՝ պատճառաբանելով, որ ՀՅԴ արևմտահայ հատվածը դեմ էր կամավորական շարժմանը: Սակայն հուշերի հետագա շարադրանքից երևում է, որ 1914 թ. դեկտեմբերին՝ Սարիղամիշի շրջանում թուրքերի հարձակումից հետո, հաշվի առնելով ստեղծված տագնապալի իրադրությունը՝ ինքն ընդառաջել է Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի առաջարկին և ձեռնամուխ եղել կամավորական ջոկատի կազմավորման գործին: Հուշերում նկարագրում է իր ծանոթությունը Գարեգին Նժդեհի հետ և իր վրա վերջինիս թողած լավ տպավորությունը:*

*Իր հուշերում Խանասորի Վարդանն արծարծում է կամավորական շարժման խնդրահարույց կողմերից մեկը՝ ներքին կարգապահության հարցը, և այս համատեքստում անդրադառնում հնչակյան կամավորների հետ տեղի ունեցած միջադեպերին: Պատմում է կամավորական ջոկատների հրամանատարներ Դրոյի, Համազասպի, Անդրանիկի, Քեռու բարդ փոխհարաբերությունների մասին: Կամավորական շարժման ընթացքում ի հայտ եկած թերությունների մասին խոսելով՝ Վարդանը, թերևս, ծայրահեղության մեջ է ընկնում՝ գրելով, որ հայը չի կարող ազատ ու անկախ լինել: Այս հարցի կապակցությամբ Ռ. Սահակյանը տողատակում իր անհամաձայնությունն է հայտնում՝ գրելով՝ «հեղինակի նման պնդումը չի համապատասխանում իրականությանը» (182 էջ): Սրա հետ մեկտեղ որոշ դեպքերում հուշերի հեղինակն իր դատողություններում երբեմն հակասում է ինքն իրեն՝ խոսելով հայ ժողովրդի զոհաբերության ընդունակ երիտասարդության, բռնակալական իշխանության տակ գտնվող արևմտահայությանը փրկելու հայ երիտասարդության պատրաստակամության մասին (էջ 190–191):*

*Խոսելով Վանի 1915 թ. հուլիսյան նահանջի մասին՝ Ռ. Սահակյանը տարակուսանք է հայտնում առ այն, որ Վարդանն իր հուշերում չի խոսում քրդական հարձակումների մասին, որոնք անընդհատ ուղեկցել են Վանի գաղթականությանը (էջ 219): Այդտեղ նա պատմում է իրեն Արարատյան գնդի հրամանատար նշանակելու, գնդի հանդերձավորման ու զինման ուղղությամբ իր գործադրած ջանքերի մասին:*

*Հուշագրության վերջին ենթագլխում Վարդանը պատմում է, որ Վանից վերադառնալուց հետո իրեն հանձնարարվում է նոր կամավորական ջոկատ կազմակերպելու գործը, որին ինքը ձեռնամուխ է լինում Երևանում: 1916 թ. ամռանը Վարդանի կազմած ջոկատը մեկնում է Ջուլֆա, ուր և ստանում են կամավորական ջոկատները հրաձգային գումարտակների վերածելու ու ռուսական զորքի մեջ տարրալուծելու լուրը: Վարդանի վկայությամբ՝ դա ծանր տպավորություն է գործում կամավորականների վրա, որոնց մեծագույն մասը հրաժարվում է: Ռուսական հրամանատարությանն իր հրաժարականն է ներկայացնում նաև Վարդանը, որին առաջարկել էին սպայական աստիճան, եթե նա շարունակեր ծառայությունը ռուսական բանակում: Այս ենթագլխում հուշագրողը կրկին շեշտում է ռուսական իշխանությունների անբարյացկամ վերաբերմունքը դեպի հայ կամավորական շարժումը: «Մեր այնքան զոհաբերություններն ու աջակցությունը միայն անտարբերություն և արհամարհանքի արժանացան» (էջ 227),– խորին հիասթափությամբ գրում էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի նվիրյալը:*

*Զինվորական ծառայությունից հրաժարվելուց հետո Վարդանը մեկնում է Երևան, որտեղից էլ ընտանիքով տեղափոխվում է Բաքու՝ եղբայրների մոտ: Այստեղ ավարտվում է Վարդանի հուշագրությունը:*

*Գիրքն ունի ռուսերեն ու անգլերեն ծավալուն ամփոփումներ, անձնանունների և տեղանունների բառարան:*

*Նկատենք, որ թեպետ Ս. Մեհրաբյանի կյանքի ու գործունեության 1918–1943 թթ. դուրս են հրատարակված հուշագրության ժամանակագրական շրջանակից, սակայն ցանկալի էր, որ գրքի այս բաժնում որոշ տեղեկություններ տրվեին ազատագրական շարժման գործչի՝ ավելի քան 20 տարվա կյանքի և գործունեության մասին:*

*Խանասորի Վարդանի հիշատակարանն ունի աղբյուրագիտական կարևոր արժեք: Պատմական դեպքերի ու իրադարձությունների նրա մեկնաբանությունները, որոշակի սուբյեկտիվիզմով հանդերձ, պատմաբան-հետազոտողի համար առանձնահատուկ նշանակություն ունեն տվյալ պատմական ժամանակաշրջանը օբյեկտիվ ներկայացնելու առումով:*

*Հուշերը միաժամանակ սրընթաց զարգացող իրադարձությունների բովում գտնվող ականատեսի վկայություններ են, որոնք բավական պատկերացում են տալիս ազգային խնդիրների ու դրանց լուծման ուղիների վերաբերյալ ազատագրական շարժման հորձանուտում գտնվող առանձին գործիչների մտայնության մասին:*

*Արձանագրենք. Խանասորի Վարդանի սևագիր հուշերի հրատարակության նախապատրաստման տքնաջան գործը լավագույնս իրականացրել է Ռուբեն Սահակյանը, ում շնորհիվ պատմաբանների ու ժամանակաշրջանի պատմությամբ հետաքրքրվողների սեղանին է դրվել սույն արժեքավոր աշխատությունը:*

ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հասարակական-քաղաքական մտքի և ազգային կուսակցությունների պատմություն: Հեղինակ է 2 մենագրության և շուրջ 30 հոդվածի:
gegham.hovhannisian@mail.ru